ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2021թ. թիվ 792-Ա

Ս. ԽԱՐԱԶՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Լեջանի միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սամվել Պարգևի Խարազյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ մինչև նրա 65 տարին լրանալը:

2. Ս.Խարազյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 3-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

12/3/2021

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր